

2. նվիրատու Բուրայն այլ տեղերից մեզ անձանոթ է, ուստի և անհնարին է վերականգնել նրա պապի անունը, որ սկսվում է Ջար-ով:

3. Վանքի առաջնորդների անունները վերակազմել ենք նույն թվականին պատկանող № 59 արձանագրության հիման վրա:

Տարբերեցում.— 1. Ղրիմ հավանաբար հաշվի չի առել արձանագրության աջակողմի ընկած քարերը, այդ պատճառով առաջին տողի Ջար անձնանվան սկզբնավորությունը կապելով 2-րդ տողասկզբի (Ասաված)ածինս-ի վերջավորության հետ ստացել է Ջարագնի անսովոր անունը:

2. Ղրիմ Մամախաթուն կարդացել է Աննախաթուն:

3. յԱռինջք տեղանունը Ղրիմ կարդացել է (այդին) առի:

4. Նոր կիրակէին Ղրիմ կարդացել է՝ յամէն կիրակի:

5. Վարդապետն և հայր Գրիգոր Ղրիմ կարդացել է՝ Ես Վարդան վարդապետ:



Նկ. 45. Արձ. № 51:

52. Նախորդ երկու արձանագրությունների սակից,  
երկու կամառաձեվությունների մեջտեղը

(Լուս. № 46)

Հ ՈՂԸ Մ 1229

Հրատարակված է՝ Ջալ 23, Ղրիմ 58—59, Վիմ 73

- 1 Ի թուին ՈՂԸ: Անուամբն Այ, ես՝ Համլիկ, որդի Սմայատա,
- 2 յազգէ Համազասպանց, ետու մեծաւ յուսով յԱձ-
- 3 ածինս զԿիլուաշէն իւր եռանդամբ, մին արտ եւ Լմն հ-
- 4 ող ի Կարմիր քարէն: Ով զայս, որ աուեր եմ, հանէ յԱձածնէս, Յուդ-
- 5 աի եւ Կահնի նգովիցն տէր է, նգովս առցէ յԱյ եւ յամեն սրբոյ: Ես՝
- 6 Գրիգոր վարդապետ, առաջնորդ Սանահնիս, միա(բա)նաւք ընկալաք զՀամլկան
- 7 ընծայս եւ հաստատեցաք նոցա զամէն եկեղեցիքս պատարագ Բ աւր Յոհաննու տաւնին